Արձանագրություն 3

«Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ կարիքների համար «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/09» ծածկագրով Դեղորայքի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Վեդի 31. 01.2025թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ
Ս. Խաչատրյան – «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի փոխտնօրեն
Անդամներ
Ա. Սիմոնյան- «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի դեղատան վարիչ
Հ. Գաբրիելյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահ

Քարտուղար-գնումների համակարգող

Լ.Բազիկյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գնումների համակարգող

1. **ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/09 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում շտկման ենթակա փաստաթղթերի գնահատման վերաբերյալ**

Հիմք ընդունելով «Լուարտ» ՍՊԸ-ի և ԱՁ Ռիտա Գասպարյանի կողմից ներկայացված հայտերում առկա շտկման ենթակա փաստաթղթերը և առաջնորդվելով 04 մայիսի 2017թ. N526-Ն Կառավարության որոշման 41-րդ կետի պահանջներով՝ հանձնաժողովը աճուրդն ամփոփվելու հետո որոշում էր կայացրել 1 աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «Լուարտ» ՍՊԸ-ին և ԱՁ Ռիտա Գասպարյան-ին շտկել առկա անհամապատասխանությունները:

Վերջիններիս կողմից էլեկտրոնային աճուրդի համակարգ են ներմուծվել շտկման ենթակա փաստաթղթերը, մասնավորապես «Լուարտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հայտում բացակայող իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված 1.3-ը, իսկ ԱՁ Ռիտա Գասպարյանի կողմից ներկայացվել է շտկված դիմում-հայտարարությունը՝ Հավելված 1-ը:

Հանձնաժողովը որոշեց՝ մասնակիցների հայտերը գնահատել բավարար և ներկայացնել հետագա գնահատման:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

2. **Մասնակիցների առաջարկած գների մասին**

(Ս. Խաչատրյան)

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացվում են կից հավելվածով՝ Հավելված 1.

2.2 Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատող հանձնաժողովի կողմից համակարգի միջոցով գնահատվել են բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3. **«ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/09» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցների, չկայացած չափաբաժինների մասին**

(Ս. Խաչատրյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

3.1 «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/09» ծածկագրով կազմակերպված ԷԱՃ ընթացակարգում ընտրված մասնակիցներ ճանաչել

- **«Արֆարմացիա» ՓԲԸ**-ին - **4, 5, 6, 9, 15, 23-րդ և 29-րդ** չափաբաժինների մասով:
- **«Զայնա Մոլլ» ՍՊԸ** -ին - **8-րդ** չափաբաժնի մասով:
- **«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ** -ին - **10-րդ** չափաբաժնի մասով:
- **«Նատալի Ֆարմ» ՍՊԸ**-ին - **13-րդ և 19-րդ** չափաբաժինների մասով:
- **«Ֆարմասերվիս» ՍՊԸ**-ին - **14-րդ, 16-րդ և 25-րդ** չափաբաժինների մասով:

- **«Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ**-ին - **17-րդ** չափաբաժնի մասով:
- **ԱՁ Ռիտա Գասպարյան**-ին - **20-րդ** չափաբաժնի մասով:
- **«Լուարտ» ՍՊԸ** -ին - 45**-րդ** չափաբաժնի մասով,

որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ:

3.2 <u>ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-25/09 ծածկագրով գնման ընթացակարգի չկայացման վերաբերյալ</u>

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/09 ծածկագրով ընթացակարգը

- հայտարարել չկայացած 1-ին, 3-րդ, 7-րդ, 11-րդ, 12-րդ, 18-րդ, 21-րդ, 22-րդ, 24-րդ, 27-րդ, 28-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 34-րդ, 37-րդ, 41-րդ և 43-րդ չափաբաժինների մասով՝ հայտերից ոչ մեկը հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով,
- ինչպես նաև հայտարարել չկայացած 2-րդ, 26-րդ, 33-րդ, 35-րդ, 36-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ, 42-րդ և 44-րդ չափաբաժինների մասով՝ հայտերի բացակայության հիմքով՝ վերոնշյալ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

4. «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/09» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման հրապարակման և անգործության ժամկետի մասին

(Ս. Խաչատրյան)

«Գնումների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով, անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Անգործության ժամկետի ավարտից հետո մասնակիցներին սահմանված կարգով կներկայացվի պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ս.Խաչատրյան**

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Ա.Սիմոնյան**

_____ **Հ.Գաբրիելյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Լ.Բազիկյան**